




“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆԵՐ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԲ. 16.

ՀԱՏՈՐ ԺԲ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1883

ԹԻԻ 5



սանճ

ԿԱՐՅՈՒՆ ԿՈՒՆԿԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՆ

ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐՖԻԼՏ

Ճէյմս Ա. Կարֆիլտ Ամերիկայի Միացեալ Նահանգաց նախագահ ընտրուեցաւ 1880 ին : Կարֆիլտի հայրն էր աղքատ մարդ, կը բնակէր այնպիսի տան մը մէջ որ շինուած էր իրաւում վրայ դրուած ծառի կոճղերէ, և այս մարդը շատ կ'աշխատէր իւր կնոջ և զաւակաց պարէն հայթայթելու համար : Բայց այս մարդը երիտասարդութեան ատեն հիւանդացաւ և մեռաւ, և շատ քիչ ստացուածք թողուց իւր կնոջ որ կարենար սնուցանել իւր փոքր զաւակները : Ճէյմս բարի և աշխատասէր տղայ էր : Իւր մօրն օգնելու համար կանուխ գործի մտաւ, և սկսաւ վարել ձիեր որ ջրանցքի մը վրայ նաւակներ քաշելու կը գործածուէին : Առջի երեսի պատկերին ձախ կողմի վարի անկիւնը կը տեսնուին այսպիսի նաւակ մը և ջրանցք : Ճէյմսի մայրն էր բարեպաշտ կին, և կը փափաքէր որ իւր որդին աղէկ դաստիարակութիւն առնէ : Վերջապէս Ճէյմս որոշեց դպրոց երթալ, և միտքը դրաւ բարձրագոյն վարժարան իսկ մտնել, եթէ հնար ըլլար : Կարֆիլտ ցորչափ դպրոց կ'երթար, իւր ծախքն ինք հոգալու ստիպուած էր, և դպրոցին արձակուրդի ատեն ազարակի մէջ աշխատելով ստակ կը շահէր, և այսպէս կարող եղաւ բարձրագոյն վարժարանի մէջ ուսմանը ընթացքն աւարտել : Ապա եղաւ գլուխ բարձրագոյն վարժարանին ուր սկսաւ իւր կրթութիւնը . յետոյ ծերակուտի անդամ ընտրուեցաւ իւր նահանգին մէջ, Ամերիկայի բանակին զօրապետ եղաւ 1860—1864 ի պատերազմին ատեն, ճայց բանակը թողուց ազգային ժողովոյ մէջ ծառայելու համար իւր հայրենեաց, և վերջապէս 1880 ին ընտրուեցաւ նախագահ Միացեալ Նահանգաց : 1881 ին զարնուեցաւ թըշուառական մարդէ մը, և երկար շաբաթներ համբերութեամբ վշտաց տանելէ ետքը մեռաւ, և անոր մահն ողբացին ոչ միայն իւր հայրենակիցք, այլ և համայն աշխարհի բարի մարդիկ :

Ճէյմս Կարֆիլտի կեանքը կը ցուցնէ թէ ինչ կրնայ ընել բարի, քաջ և աշխատասէր տղայ մը : Կարֆիլտ շատ աղքատ էր, բայց ուղիւնք չվհատեցուց զնա : Նա միտքը դրաւ մարդ ըլլալ : Եղաւ անկեղծ հետևող քրիստոսի : Երբ բարձրագոյն վարժարան էր՝ չէր ամէնար ուրիշներու ըսել թէ ինք աշակերտ էր քրիստոսի, թէ սո-

վորած էր ամէն օր Սուրբ գիրք կարդալ և աղօթել : Երբեմն երկուսասարդք դպրոցի մէջ անհաւատական դադարներ կը տածեն, և այնպէս կը խօսին որպէս թէ կրօնքը ուսմիկ մարդոց համար է, ոչ թէ կրթեալ մարդոց համար : Ճէյմս Կարֆիլտ այնպիսի մէկը չէր : Օր մը Կարֆիլտ և անոր ընկերները վարժարանին մօտերը լսեցին մը գլուխն ելան, և գիշերը հոն անցուցին : Երեկոյին Ճէյմս դրպանէն հանեց Աստուածաշունչն և ըսաւ, «Մայրս սովոր է Աստուածաշունչ կարդալ այս պահուն, և ես կը կարդամ նոյն գլուխն :» Չայս ըսաւ, և սկսաւ կարդալ այն գլուխը զոր գիտէր թէ կը կարդար մայրն իւր տան մէջ, և մինչ Ճէյմս կը կարդար, միւս ընկերք ուշադրութեամբ ունկնդիր կ'ըլլային : Կարֆիլտի բարի մայրն երջանկութիւն ունեցաւ տեսնելու իւր որդւոյն պատուէ ի պատիւ բարձրանալը, և վերջապէս նստաւ վաշինկոնի մէջ ազգային ժողովոյ մեծ պալատը, և լսեց այն ուղերձը զոր ըրաւ Կարֆիլտ երբ բազմեցաւ նախագահութեան աթոռը :

ՕՐԻՆԱԿ

Սիրելի տղայք, անցեալ ամիս խօսեցայ ձեզ թէ որչափ կարևոր է բարձր նպատակ մ'ունենալ ձեր առջև : Այս անգամ պիտի խօսիմ ձեզ օրինակի օգտակարութեան վրայ :

Երբ դպրոցի մէջ գեղազրութեան վարժութիւն կ'ընէք, օրինակ մ'ունիք ձեր առջև, և կը ջանաք ձեր գիրք նմանցունել այն օրինակին : Թերևս յաճախ սխալներ կ'ընէք : Չեր գիրքը ստանկնները, ձևերն և գիծերը կ'ըլլան տարբեր օրինակին մէջ ցուցուածէն : Բայց ձեր դասատուն իմաստութեամբ վարուած չէր ըլլար, եթէ ըսէր, «Այս տղայն չկրնար գրել այնպէս կատարեալ ինչպէս է գեղազրութեան տեսրին մէջ ցուցուած օրինակը, ուստի ես անոր տալու եմ ուրիշ օրինակ մը ոչ այնչափ կատարեալ, որպէս զի տղայն կարենայ անոր նման գրել, եւ երբ տղայն սորվի այս անկատար գիրերուն բոլորովին նմանը գրել, այնուհետեւ տամ անոր լաւագոյն օրինակ մը :» Այս կերպն ուղիղ կերպ մը չէ տղոց գեղազրութիւն սորվեցնելու : Միշտ պէտք է աշակերտին առջև դնել կատարեալ օրինակ : Աշակերտը թող ջանայ միշտ կատարեալ գիրերու նմանը գրելու, և անատեն

անոր գիրը կ'ըլլայ շատ աւելի աղէկ քան զայն որ պիտի ըլլար եթէ անկատար օրինակներու նայելով վարժութիւն ընէր :

Արդ, ինչ որ ուղիղ է գեղազրութեան մասին, ուղիղ է նաև բարուց մասին : Պարտինք այս մասին ևս չանալ նմանիլ լաւագոյն օրինակաց, և ոչ գոհ ըլլալ ջանալով նմանիլ անոնց որ անկատար են : Այն որ գծազրութիւն սորվի կ'ուզէ, միշտ աչքի առջև ունենալու է գեղեցիկ պատկեր մը, որպէս զի անոր ճաշակը կրթուի և ազնուանայ : Այսպէս եթէ լաւագոյն կեանքի մը պատկերը կենաց մեր մտաց աշուքներուն առջև, լաւ ազդեցութիւն կ'ունենայ մեր վրայ :

Հարկ չէ ըսել ձեզ թէ այս մասին կայ միայն մէկ կատարեալ օրինակ, և այն է Յիսուս Քրիստոս : Նա դրաւ մեր առջև օրինակ մը որ միշտ ջանանք հետևիլ անոր : Աղէկ է մեզ հետևիլ այն բարի բաներուն զոր կը տեսնենք մեզի ծանօթ բարի մարդոց վրայ : Բայց այն ատեն միայն վստահ կրնանք ըլլալ թէ չենք սխալիր, երբ կը նմանինք Յիսուսի : Անոր կենաց պատկերն ունինք Աւետարանի մէջ : Այս պատկերը շատ յստակ, պայծառ և գեղեցիկ պատկեր մ'է : Որչափ աւելի ուշադրութեամբ դիտենք զայն, այնչափ աւելի պայծառ կը տեսնենք անոր գեղեցիկութիւնը, և մեր կենաց նպատակն ըլլալու է միշտ ջանալ նմանիլ անոր : Ծիտակ չէ ըսել թէ ի զուր կ'աշխատինք նմանիլ Յիսուսի, վասն զի նա Աստուած է, և կարելի չէ մեզ ըլլալ Աստուած : Այո, մենք չենք կրնար ըլլալ Աստուած, բայց կրնանք ըլլալ աստուածանման, կրնանք ջանալ ըլլալ նման Յիսուսի :

Որովհետև մենք տկար ենք, մեր լաւագոյն ջանքերն իսկ են անկատար : Բայց եթէ խնդրենք, Յիսուս կու տայ մեզ զօրութիւն, այնպէս որ մենք կրնանք ըլլալ իրօք անոր նման : Որչափ երանելի է ըլլալ նման Յիսուսի Քրիստոսի օրինակին :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Գրեթէ ասկէ դար մ'առաջ, այսինքն 1789 ին, Անգղիական նաւատորմէն Պատուդի անուն նաւ մը խաղաղական ուղիւնոսի մէջ կը պտտէր : Նաւաստիք դժգոհ եղան իրենց պաշտօնակալներէն, և ապստամբեցան անոնց դէմ, և պաշտօնակալները դնելով իրենց մէջ թողուցին զանոնք, և իրենք նաւարկելով գացին Դահիգի կոչուած

կողին, ուր տեղացիներէն կիներ և սպասաւորներ առին, և անտի գացին Բիդզըրնի ամայի կողին, ուր որոշեցին մնալ: Ինչ որ կրնային, ցամաք հանեցին նաւէն, և ապա այրեցին նաւն, որպէս զի մէկը չտեսնէ զայն և չիմանայ ապստամբութիւնը: Հոն այն կողոյն մէջ նաւաստիք վարեցին անկարգ կեանք երկար տարիներ, և բաց ի ձոն Ատամն անուն անձէ մը ամէնքը մեռան: Այս մարդն սկսաւ խորհիլ իւր անցեալ կենաց վրայ: Պատենդի նաւէն քանի մը Աստուածաշունչ առած էր, և որոշեց կարգաւ Սուրբ գիրքը: Այս ընթացման շարքիւ և Աստուծոյ օգնութեամբ եղաւ անկեղծ աշակերտ Գրիստոսի, և իւր որդիներն և իւր վարդափ ընկերաց որդիները կրթեց Գրիստոսնէութեան ճամբուն մէջ, այնպէս որ քանի մը տարիէն բոլոր ժողովուրդն եղաւ Գրիստոսեայ:


1839 ին Ամերիկեան նաւ մը գնաց այն կողին, և բարեպաշտ նաւաստի մը ուրախութեամբ տեսաւ այն տեղի Գրիստոսեայ հասարակութիւնն, և քանի մ'որ մնաց անոնց հետ, և ներկայ կը գտնուէր անոնց արթնի ժողովներուն: Ժողովուրդէն անձ մը յիշեալ նաւաստիին տուաւ երկու օրինակ այն Աստուածաշունչերէն որ Պատենդի նաւէն ազատուած էին, և միջոց եղած էին այն դաղթականութեան բարեկարգութեան:

Այս եղաւ յիսուն տարի առաջ, և հիմա այն բարեպաշտ նաւաստին, որ դեռ ողջ է Ամերիկայի մէջ, իւր հետ բերած երկու Աստուածաշունչերէն մին զրկած է Լոնտոնի Աստուածաշունչի ընկերութեան, որ մեծ յարգ կ'ընծայէ այն գիրքին, վասն զի եղաւ միջոց բարեկարգութեան ապստամբ նաւաստեաց սերնդոց: «Բո խօսքերուդ յայտնուիլը ըյս կու տայ:»

ՀԵՏՔ ՈՏԻՅ

Մարդու ստեղծուելէն շատ, շատ տարիներ յառաջ ջայլամի կամ կռնկան նման շատ խոշոր թռչուններ կը պտըտէին Ամերիկայի Միացեալ Նահանգներէն Գոնեզիլըդը Նահանգին դետերուն եզերքը կարմիր աւազոց վրայ: Այս թռչնոց իւրաքանչիւրն ունէր երեք մատ ամէն մէկ ոտքի վրայ, և միջամատը մեծադոյնն էր, և կրունկնէն մինչև հիւանին ծայրը երբեմն տասնև մատ երկար: Այս թռչնոց սրունքները նաև քան զսրունս որևէցէ թռչնոց ահագին մեծութիւն ունենալու

էին, վասն զի այն թռչնոց միայն մէկ քայլը իբր վեց ոտք տեղ կը բռնէր: Արդ որովհետև այն ահագին թռչնոց տե-



սակը բոլորովին ջնջուեցաւ շատ յառաջ քան զստեղծումն մարդոյ, այն



թռչնոց վրայ ուստի տեղեկութիւն կ'առնուին: Անոնց վրայ տեղեկութիւն



կ'առնենք ոտից հետքերէն զոր այն թռչունք թողած են կարմիր աւազի վրայ, որ յետոյ կարծրանալով եղաւ

քար: Այն հետքերն այնպէս լաւ տրպաւորուած են քարերուն վրայ, ինչպէս ձեր հետքերը կը դրոշմուին և կը մնան աւազի վրայ: Հին դարերու թռչնոց և անասնոց ոտքի հետքերը ցուցնող օրինակներ կը գտնենք Աւետարեի այս թռչնոց մէջ: Այս զարմանալի թռչունք կ'ապրէին հաւանականօրէն մեծ լճի մ'եզերքն, և լճին շուրջուն մէջէն կը քայլէին ձուկ որսալու համար: Այն ատեն ահագին մողէսներ (††††††††) կ'ապրէին եզերքի շարքերու (††††††††) մէջ, և խիտ անտառներ հովանի կը տարածէին շուրջանակի: Բայց միայն թռչնոց ոտուրներուն հետքերը գտնուած չեն, Սիովտիոյ մէջ դետնին երեսէն 400 ոտք խոր ածխահանքի մը երեսը գտնուած են նաև ոտից հետքերն տեսակ մը մողէսի որոյ առջևի ոտքին հետքը չորս մատ երկայն, և ետևի ոտքին հետքը վեց մատ երկայն է:

Արդ, մենք ալ մեր ետևէն հետքեր կը թողունք, եթէ ուղենք և եթէ չուղենք, և անոնք որ մենէ ետքը կու գան այն հետքերուն նայելով կարող պիտի ըլլան ըսել թէ ինչպիսի մարդիկ էինք մենք: Շատեր իրենց ետին թողած են Գրիստոսնէական հետքեր որ իրենք աշխարհէ մեկնելէ շատ տարիներ ետքը մնացած են և դեռ կը մնան:

Բանտերու մեծ բարեկարգիչը, Հաուարտ անուն Անգղիացին, թողած է այնպիսի հետք: Այս անձը տեսնելով որ իւր օրով բանտարկեալներուն հետ շատ խիտ կը վարուէին մարդիկ, աղանիւ և անձնուէր ջանքերովը համոզեց այլ և այլ կառավարութիւնները բարւոքել բանտարկերոց վիճակն, և անոր մահուան ատեն արդէն մեծ բարեկարգութիւն կատարուած էր բանտերու մասին: Շատ մը փոքր տղայք ալ, որ կանուխ մեկնած են այս աշխարհէ, իրենց ետին թողած են փայլուն հետքեր որ բնաւ պիտի չջնջուին:

Հոս պիտի չխօսինք անոնց վրայ որ գէշ հետքեր թողած են, բայց որովհետև սա սարդ է թէ մեր գործերն և մինչև իսկ մեր խօսքերը կը թողուն հետքեր, ինչգրենք մեր երկնաւոր Հօրմէն որ մեր հետքերն ըլլան այնպէս որ առաջնորդեն մարդոց երթալ առ երկնաւոր Հայրն և ոչ թէ հեռանալ անկէ:

Այս մեղաւոր աշխարհի վրայ թողուած սրբազոյն հետքերն են Տէր Յիսուսի հետքերը: Նա ուր որ երթար, բարիք կը գործէր, ամէն օր կը կատարէր իւր երկնաւոր Հօր կամըր: Համբերութեամբ տարաւ վշտաց, ներեց իւր թշնամեաց, և թողուց մեզ օրինակ երթալ իւր հետքերուն ետևէն: Ահ, ի՜նչ մեծ երջանկութիւն է միշտ երթալ Յիսուսի հետքերուն ետևէն և քայլել ինչպէս նա քայլեց:

ՃՇՄԱՐԻՑ ՔԱՋՈՒԹԻՒՆ


Վարժապետ մը յաճախ կը նեղուէր վասն զի իւր աշակերտներէն ոմանք դպրոցի ատեն կը սուլէին : Վերջապէս վարժապետը ստիպուեցաւ ծանր պատիժ սպառնալ անոր որ այդ յանցանքը նորէն կ'ընէր : Հեռեւեալ առաւօտուն , երբ դպրոցը հանդարտ էր , սուլելու բարձր ձայն մը լսուեցաւ : Աշակերտք յայնժամ սոսկացին , ու վարժապետը բոլորափէր նայեցաւ օրինազանցը գանկելու համար : Յանցանքը ձգուեցաւ աղու մը վրայ որ յաճախ չարութիւն կ'ընէր : Բայց այն աղայն պնդեց թէ ինք չէր սուլողը , սակայն անոր խօսքին չէին հաւատար , քանզի նա ճշմարտախօս աղայ մը չէր : Ուստի վարժապետը պատրաստուեցաւ զայն պատժելու : Իբր ինը տարեկան փոքրիկ աղայ մը որ ուշադրութեամբ կը նայէր տեսնելու թէ ինչ պիտի պատահէր , իւր նստարանէն ցատկեց : «Մի պատժեր Յովհաննէսը , Տէր ,» ըսաւ վարժապետին , «վասն զի ես էի սուլողը : Երբ երկայն և դժուարին խնդիր մը կը լուծէի , և թիւ մը կ'աւրէի անոր տեղ նորը գրելու համար , սխալմամբ բորոյն աւրեցի , և ըստ որում չէի յիշեր թէ ուր էի , ու ժովմը սուլեցի : Շատ կը ցախիմ ըրածիս ,

տէր իմ , բայց դիտմամբ չըրի , ուստի չեմ կրնար թողուլ որ իմ յանցանքիս համար Յովհաննէսը պատժուի :» Եւ փոքրիկ աղայն իւր ձեռքը երկնցուց պատժուելու համար : Իսկ վարժապետը աղուն ձեռքը բռնելով ըսաւ , «կարողա , դու շտապ ըրիր . ոչ ոք կրնայ տարակուսիլ թէ ճշմարտութեամբ ես , և թէ միտք չունէիր սուլելու : Այսպիսի ազնուութեամբ ճշմարտութիւնը խոստովանելէդ ետքը ես քեզ չեմ կրնար պատժել , որդեակ իմ :» Կարողոս շառագունեալ իւր տեղը դարձաւ , և դպրոցին ամենէն փոքր աղան իսկ հաւանեցաւ անոր ընթացքին : Կարողոս ճշմարտապէս քաջ աղայ մ'էր : Կա ըրաւ ինչ որ գիտար թէ ուղիղ է , թէ և կրնար այդ բանը այդ ատեն իրեն ցաւ կրելուն պատճառ լինել : Ճշմարտութեամբ թիւնը նաև կրնայ ցուցաբեր մերժելով ընել ինչ որ գիտենք թէ սխալ է , թէ և չար ընկերներ մեր վրայ ինդան , ու մեզ վախկոտ կոչեն :

Քարգանկեայ յԱրդիբեյնէ
ԳԱՐԻԲԷԼ Ա. ԳԱՐԻԲԷԼԵԱՆ
Պարտիզակ

ՍՊՈՒՆԳ

Լոնտոնի թանգարաններէն մէկուն մէջ կայ ապակեայ սահարան մը , և անոր մէջ կը տեսնուի զարմանալի օրինակ մը սպունգի որ կարմիր հողէ ամանի մը մէջէն կ'ելլէ : Այս հողէ ամանը ժամանակաւ հանուեցաւ Յունական արքիպեղաքոսի ծովէն : Ամանը շատ հին է , և կողի վրայ կեցած սափորի ձև ունի , և նեղ բերանը լեցուած է սպունգով որ հան աճեցաւ , և նոյն ձևով ուրիշ սպունգ մը ելած է սափորին կողէն դուրս : Սպունգն ինչպէս և երբ յառաջ եկած է այն սափորին մէջ : Բնութիւնն իւր գործոց վրայ թուական չըներ , և մենք կրնանք միայն ենթացող թէ շատ ասարիներ առաջ նաւարեկութիւն մ'եղած է , և այն հին ամանը կամ սափորն ինկած է ծովուն մէջ , և այն ա-



ՆՐԵ ՍՊՈՒՆԳ ԵՒ ՍՊՈՒՆԳ

տեն կենդանարոյս (չօօֆիլ) կոչուած զարմանալի անասնիկներ , որ ծովուն յատակը կը գտնուին , եկած մնացած են այն հին ամանին մէջ :

Արդ , այս անասնիկներն իրենց մարմիններէն կը հանեն երկու տեսակ թել , որոց մին կը նմանի տերեւի թելերու , և միւսը մետաղի թելերու , և այս թելերով կը շինեն մարմին մը և անոր վրայ կը քսեն տեսակ մը մածուած , որ կը կծկի երբ անոր գպչի մէկը : Ահա այս մարմինը կը կոչուի սպունգ : Անասնիկներն ինչպէս կը շինեն սպունգ չենք կրնար բացատրել , որպէս չենք կրնար բացատրել թէ սարգն ինչպէս կը շինէ իւր ոստայնը :

Երբ անասնիկը կը մեռնի , վրան քսուած մածուածը կ'անյոյտանայ , և թելերը միայն կը մնան : Որչափ զարմանալի է որ այս փոքրիկ անասնիկներն որ յաւէտ բուսոյ նման են քան կենդանեաց , կրնան ջուրէ հանել հաստատուն նիւթ և շինել սպունգ :

Աշխարհի մէջ մարդ չկայ որ կարող

է շինել սպունգ : Եթէ երբէք հանդիպէք մէկու մը որ այնչափ չար և յիմար է մինչև ուրանալ Աստուծոյ գոյութիւնն և կարողութիւնը , խոնդրեցէք անկէ որ բացատրէ թէ ինչպէս այն անզգայ անասնիկն , որոյ անկախ կեանք ունենայն իսկ տարակուսի տակ է , կրնայ շինել իրեն համար այսպիսի զարմանալի տուն մը ծովուն խորը :

ՀԱՆՆԵԼՈՒԿ

Թէ և չեմ ոսկի , ոչ ալ գոճար , բայց մարդիկ շատ կը սիրեն զիս : Շաքար չեմ , ոչ ալ խնձոր , սակայն աղայ շատ կը վափաքին զիս ունենալ : Ոչ մանք կ'ուզեն բռնի վատակիլ զիս , և ոմանք ալ խոնարհութեամբ : Սակայն ես կը վախճիմ անկէ որ զիս կը փնտրուէ , և այն որ արժանի է ինձ՝ առանց փնտրելու կը գտնէ զիս : Զիս փնտրողը իւր շուքին ետեւէն վազողին կը նմանի : Անունս հինգ տառերէ բաղկացեալ է , որոնք հինգ երևելի անձանց անուններուն մէջ կը գրուին : Անունս առաջին տառն առաքելոց միոյն անուան առաջին տառն է . երկրորդը՝ նահապետներէն միոյն անուան առաջին տառն է . երրորդը՝ առաջին տառն է անուան Հոյոց թագաւորներէն միոյն , որ

իւր անուամբ քաղաք մ'ալ շինեց . չորրորդը՝ գարձեալ նահապետաց միոյն անուան առաջին տառն է , իսկ հինգերորդը իսրայելի երևելի թագաւորաց միոյն անուան երրորդ տառն է : Տասն և հինգ տարեկանէն վար եղող աղջկէն ով որ ամենէն առաջ գտնէ պատասխանն այս հանելուկին , անոր պիտի ընծայուի այս թանկագին բանը :

ԳՐԻԳՈՐ
Տ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
Մարտուն

Ա. Ի. Ե. Տ. Ա. Բ. Ե. Բ. ՆՐԱՍՏԱՆ (Հայերէն գրուած , և Հայ-Տաճկերէն) , փոսթայի ծախքով , տարին 6 դահեկան է :

Ամերիկայի Միտիոնարաց ընդ թմբագրի
Ֆիլադելֆիայի եօզուշու
ԿՈՍՏԱՆԴՆՈՒԿ
ՏԵՂԵՆԻՍԻՆ Ա. ՅԱԿՈԲ